



«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ/00074869 ծրագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

ՄԱԿ-ի համաժողովների դահլիճ
2014թ. մայիսի 6-ին, ժ. 10:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ՝ Նիստին ներկայացված էին Ծրագրի տեխնիկական խորհրդատվական կոմիտեի բոլոր 11 անդամները (2-ը փոխարինմամբ) և հրավիրված 10 փորձագետները (մասնակիցների ցուցակը կցվում է):

ՆՊՍՏԱԿԸ՝ Քննարկել Ծրագրի առանցքային բաղադրիչների իրականացման մոտեցումները և հնարավոր խնդիրները և ճշգրտել դրանց ներքո տեխնիկական խորհրդատվական կոմիտեի աջակցության շրջանակները

Աշխատաժողովն ընթացավ հիմնականում ըստ նախատեսված օրակարգի:

I. Ելույթներ

Աշխատաժողովին ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ բնապահպանության նախարարության մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի պետ՝ պրն.Ս.Ծառուկյանը և ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի կառավարիչ՝ պրն.Ա.Մարտիրոսյանը և կարևորեցին ծրագրի առաջնեկային բնույթը, թե ՄԱԶԾ գործունեության շրջանակների, և թե լուսավորության ոլորտի, այդ թվում՝ մասնավոր հատվածի համար, բարձր գնահատեցին համատեղ աշխատանքը և հայտնեցին շարունակական համագործակցության իրենց պատրաստականությունը: Պարոն Մարտիրոսյանը նշեց, որ օրակարգում կատարվել է փոփոխություն և թ նախատեսված ելույթները կներկայացնի տկն. Հարությունյանը

Այնուհետև տկն. Դ.Հարությունյանը ողջունեց կոմիտեի անդամների և փորձագետների մասնակցությունը: Նա ներկայացրեց Ծրագրի նպատակը և բաղադրիչների շրջանակում իրականացվելիք առանցքային գործողությունները, դոնոր կազմակերպությունների, առաջին հերթին՝ Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի պահանջները, Տեխնիկական խորհրդատվական կոմիտեի իրավասությանների ներքո լուսավորության համակարգերի էներգախնայողության կառավարման և իրավանորմատիվային խնդիրները, նշեց ֆինանսական խոչընդոտները և դրանց հաղթահարման նախատեսվող մոտեցումները: Հատուկ ուշադրություն է տրվել ցուցադրական ծրագրերի իրականացմանը, հատկապես Երևանի Իսակովի, այսուհետև Մաշտոցի պողոտաներում՝ դրանց փուլային իրականացմանը: Մասնակիցներին տրամադրվել է «Երևանում էներգաարդյունավետ լուսավորության պիլոտային ծրագրերի նկարագրությունը»:

II. Հարցեր և առաջարկներ

Քննարկեցին ֆինանսական առաջարկվող մոդելի՝ լուսավորության ոլորտում էներգաարդյունավետության բարձրացման համար հատուկ շրջանառու ֆոնդի ստեղծման հնարավորությունը համայնքային մակարդակով: Այսուհետև անդրադարձան կոնցեսիոն սկզբունքով փողոցային լուսավորության համակարգերի արդիականացման առավելություններին և թերություններին: Մասնակիցները կարևորեցին Ծրագրի՝ հանրային իրազեկման բաղադրիչը և իրագործման մոտեցումները բնակիչների և ներդրողների շրջանում, մասնավոր հատվածի համար: (Ս.Գաբրիելյան, Ա.Հարությունյան, Դ.Հարությունյան, Ս.Աբրահամյան)

Անդրադարձան Ծրագրի շրջանակներում ՀՀ նորմերի և ստանդարտների վերամշակման հնարավորություններին և կարևորեցին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացրած՝ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների նախագծի մոտ ապագայում ակնկալվող ընդունումը: (Ս.Սրայսյան, Հ.Բադալյան, Դ.Հարությունյան, Ա.Գարսպետյան)

Մանրամասնեցին Ծրագրի շրջանակներում համապատասխան ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաև նախագծողների և ճարտարապետների որակավորման բարձրացման խնդրի ներառման խնդիրը, ներառյալ միջազգային փորձի փոխանակումը, հաշվի առնելով էներգաարդյունավետության ոլորտում ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրերի փորձը: *(Պ.Մանուկյան, Դ.Հարությունյան)*

Նշվեցին ՀՀ նորմերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների վերամշակման գործում ԵՄ և ՌԴ մոտեցումների ընտրական կիրառության կարևորությունը, մասնավորապես, հաշվի առնելով համապատասխան պահանջների կատարումը և իրականացումը ԵՄ տարբեր երկրներում: Նշեցին լուսավորության ոլորտում տեխնիկական կանոնակարգի արդիականացման անհրաժեշտությունը: *(Ս.Աբրահամյան, Գ.Նազարյան, Դ.Հարությունյան, Տ.Սեկոյան)*

Նշվեց, որ լուսավորության ոլորտում ԵՄ նորմերն ու ստանդարտներն արդեն հաշվի են առնում մարդու աչքի ֆիզիոլոգիան հատկությունները և այդ առումով առաջ են ՌԴ մոտեցումն երից, սակայն տեխնիկապես սարքերի տարբերությունները մեծ չեն, այսինքն՝ համահունչ է ՀՀ-ում գործող նորմատիվաիրավական դաշտին և ավելի դյուրին է դարձնում օրենսդրական և նորմատիվային ակտերի տեղայնացումը: *(Ա.Գուլբանյան, Դ.Հարությունյան, Վ.Հարությունյան)*

Քննարկեցին լուսադիոդային, նատրիումային և այլ տեսակի լամպերի՝ մարդու առողջության վրա ազդեցությունը (սպիտակ և դեղին լույս), լուսատուների տեխնիկական հատկանիշները, տեղական շուկայում առկա արտադրանքի որակի ապահովման և մոնիտորինգի հարցերը, գնումների գործընթացում համապատասխան նորմատիվային պահանջների ներդրման խոչընդոտները և դրանց հաղթահարման հնարավորությունները, այդ թվում՝ ինստիտուցիոնալ խնդիրները: *(Գ.Նազարյան, Հ.Բաղայան, Դ.Հարությունյան)*

Ըստ պրն.Ա.Հարությունյանի առաջարկի, նիստը շարունակվեց ցուցադրական ծրագրերի առանձին քննարկումով, որին մասնակցեցին Դ.Հարությունյանը, Ա.Գուլբանյանը, Ս.Գաբրիելյանը, Վ.Հարությունյանը, Ա.Կարապետյանը, Տ.Սեկոյանը և Կ.Սարգսյանը:

III. Ամփոփում

Մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին աջակցություն ցուցաբերելու ծրագրի իրագործմանը: